ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԱԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (17040) ՇԱԲԱԹ 30 ԱՊՐԻԼԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ Է՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՐԵՎԷ ԱՆՁԻ ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԵՐ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, արձագանքելով առանձին լրատվամիջոցներում ներկայացված հաղորդագրությանը, իբր Վրաստանի տարածքն օգտագործվում է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների շրջանցման համար, հայտարարեց, որ ոչ մի իրավաբանական կամ ֆիզիկական անձի թույլ չեն տալու օգտագործել Վրաստանի տարածքը պատժամիջոցները շրջանցելու համար, սա իշխանության սկզբունքային դիրքորոշումն է, որը չի վերանայվելու:

Նրա խոսքով, իրենք շատ սերտ համագործակցություն ունեն այս հարցում, համակարգում են գործընկերների հետ եւ ցանկանում են վերջ դնել այս հարցի շուրջ ցանկացած շահարկումների:

- Ուզում եմ հաստատակամորեն հայտարարել մեր կառավարության սկզբունքային դիրքորոշման մասին: Վրաստանի կառավարությունը թույլ չի տա որեւէ պատժամիջոց՝ օրինական կամ անհատական անօրինական գործունեություն Վրաստանի տարածքում,- ասաց վարչապետը՝ հավելելով, որ այս ամբողջ իրարանցումը, սկանդալն ու անհիմն մեղադրանքները վրացական կառավարության միայն մեկ նպատակի են հետապնդում՝ ցանկացած ճանապարհով Վրաստանում երկրորդ ճակատ բացելու:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ

Ապրիլի 28-ին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, ԱՄՆ կատարած այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսիի հետ:



Նենսի Փելոսին Սալոմե Զուրաբիշվիլուն հյուրընկալել է Կապիտոլիումի շենքում:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական գործընկերության ամրապնդման, ԱՄՆ-ի կողմից Վրաստանի Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության աջակցության հետ առնչվող հարցեր:

Կողմերը անդրադարձան նաեւ տարածաշրջանային հարցերին, մասնավորապես քննարկեցին ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում Եվրոպայում ստեղծված քաղաքական նոր իրավիճակը:

Նշենք, որ Վրաստանի նախագահը աշխատանքային այցով ԱՄՆ-ում էր գտնվում՝ մասնակցելու Միացյալ Նահանգների նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հրաժեշտի արարողությանը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակությունը՝ սենատոր Քրիս Քունսի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում՝ ամերիկյան ներկայացուցիչներին ընդունեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Հանդիպմանը նշվեց, որ ԱՄՆ-ի պատվիրակության այցը ռազմավարական գործընկեր Վրաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆԵՐՔՈ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ՀԱՆՐԱՅՆԱՑՎԵՑ



Վրաստանի կառավարությունը հրապարակեց ԵՄ անդամակցության համար Վրաստանի ստացած հարցաթերթիկի առաջին մասը: Կառավարությունից հայտնում են, որ ԵՄ-ից ավելի ուշ կստանան նաեւ հարցաթերթիկի երկրորդ մասը, որը նույնպես հասանելի կլինի հանրությանը:

Հարցաթերթիկը բաղկացած է 369 հարցից, որոնք բաժանված են մի քանի ենթաբաժինների ու մտահոգությունների, մասնավորապես՝ ժողովրդավարություն եւ օրենքի գերակայություն, հիմնական իրավունքներ, տարածաշր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 107

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցեցին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ կառավարության այլ անդամներ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԳ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ Առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի նախագահությամբ, կատարվեց բարեխոսական կարգ՝ հայցելով Մեծ եղեռնի սուրբ նահատակների բարեխոսությունն առ Աստված ի բարօրություն աշխարհի ժողովուրդների առողջության ու երկրների խաղաղության:

Արարողությանը ներկա էին Թբիլիսիում գործող հասարակական կազմակերպությունների, մտավորականության ներկայացուցիչներ, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Երեւանի «Ապավեն» ընկերության գլխավոր տնօրեն Գագիկ Աղաջանյանը, Վրաստանի վարչապետի խորհրդարանական քարտուղարի աշխատակազմի աշխատակից Կարեն Եղիազարյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը:

Արարողությունից հետո Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի դիմաց ծաղիկներ խոնարհվեցին:

ՋՈ ԲԱՅԴԵՆ. «ՄԵՆՔ ՀԱՆԱՉՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԵՐԻ ՅԱՎԵՆ ՈՒ ՀԱՐԳՈՒՄ ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենը ապրիլի 24-ին հանդես է եկել Հայոց Ցեղասպանության 107-րդ տարելիցին նվիրված ուղերձով՝ վերահաստատելով ամերիկյան կողմի հանձնառությունը՝ զգոն լինել ընդդեմ ատելության կործանարար ազդեցությունների եւ կառուցել ավելի խաղաղ աշխարհ:

«1915 թվականի ապրիլի 24-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Ռ.Թ.ԷՐԴՈՂԱՆ. «...ՄԻԱՍԻՆ ԲՈՒԺԵԼ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐՔԵՐԸ»

Հայոց Ցեղասպանության 107-րդ տարելիցին եւս Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ուղերձ է հղել Պոլսո Հայոց պատրիարք Սահակ Մաշալյանին, որտեղ ասված է.

«Այսօր դուք հավաքվել եք Ստամբուլի Հայոց պատրիարքարանի հարկի տակ՝ ոգեկոչելու Առաջին համաշխարհային պատերազմի դժվարին պայմաններում իրենց կյանքը կորցրած օսմանցի հայերի հիշատակը: Ես եւս մեկ անգամ հարգանքով ոգեկոչում եմ զոհված օսմանցի հայերին եւ իմ անկեղծ վշտակցությունը հայտնում նրանց ողջ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ Է՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՐԵՎԷ ԱՆՁԻ ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԵՐ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԾՐՁԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրա խոսքով, բոլորը հիշում են դեսպանին հետ կանչելու բացարձակապես անհիմն որոշումը, ապա նաեւ՝ կաթի, պանրի եւ այժմ ցորենի հետ կապված որոշ մեղադրանքներ, որոնք հնչեցին ուկրաինացի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, թերեւս փաստելով, որ Մոլդովայում եւ Վրաստանում երկրորդ ճակատ բացելու ցանկություն եւ նպատակ իսկապես գոյություն ունի:

- Մենք լսեցինք նաեւ այլ հայտարարություններ՝ կապված նմանատիպ մտադրության հետ եւ, ցավոք, նրանց կողմից արված հայտարարությունը, որ մենք՝ Վրաստանի կառավարությունը, պատրաստ չենք պատերազմի եւ չենք գնա, եւ Սակաշվիլին դա կաներ: Մենք լավ գիտենք, որ Սակաշվիլին ամենամեծ անուղղելի սխալը թույլ տվեց, երբ չխուսափեց մեր ժողովրդի եւ մեր երկրի դեմ պատերազմից:

Եթե Սակաշվիլին այսօր իշխանության ղեկին լիներ, պատերազմ կլիներ, այստեղ երկրորդ Մարիուպոլ կկազմակերպվեր, դա էր մտադրությունը, եւ ես ուզում եմ ձեզ տալ հիմնական հարցը՝ ինչո՞ւ Սակաշվիլին եկավ Վրաստան: Սակաշվիլին եկել էր երկիրը ապակայունացնելու, հեղափոխության, զանգվածային սպանությունների, այդ թվում՝ ընդդիմության առաջնորդների սպանության եւ հեղաշրջման նպատակով: Սա ուղղակիորեն նշանակում էր օկուպացված երկրում նոր պատերազմի սկիզբ: Հասկանում եք, թե որքան կեղտոտ սադրանքներից ենք մենք խուսափել:

Ես ուզում եմ ասել բոլորին՝ Վրաստանում այլ ճակատ, պատերազմ չի լինի, սա մեր սկզբունքային որոշումն է,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆԵՐՔՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջանային խնդիրներ եւ միջազգային պարտավորություններ, տնտեսական խնդիրներ:

Հարցեր, որոնք բովանդակում են, թե ինչպես է ստեղծվում կառավարման համակարգը, ինչպես է Սահմանադրությունը սահմանում իշխանության ճյուղերի միջեւ ուժերի հավասարակշռություն եւ վերահսկողություն, ինչպես են նշանակվում դատավորները, երաշխավորվո՞ւմ են, արդյոք, երկրում մարդու հիմնարար իրավունքները, ներառյալ՝ հանրահավաքները, ինչպես նաեւ փոքրամասնությունների տարբեր իրավունքների պաշտպանությունը, նրանց ինտեգրումը հասարակության տարբեր ոլորտներ:

Հարցեր կան նաեւ Վրաստանում տնտեսության կայունության, անձնական տվյալների պաշտպանության, անձնական կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության պաշտպանության եւ այլնի մասին:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ ինքն անձամբ համակարգում է ԵՄ հարցաթերթիկը ժամանակին եւ արդյունավետ կերպով լրացնելու եւ մայիսին Եվրահանձնաժողովին ներկայացնելու գործընթացը,- լրագրողներին ասաց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նա նշեց, որ հարցաթերթիկը լրացնելու գործընթացում ներգրավված են կառավարությունը, խորհրդարանը եւ պետական բոլոր մարմինները:

- Ես ղեկավարում եմ եվրահինտեգրման հարցերով հանձնաժողովը: Բոլոր գերատեսչությունները մոբիլիզացված են, որպեսզի հնարավորինս շուտ լրացնեն այս հարցաշարը եւ ժամանակին հասցնեն այն՝ մեր եվրոպացի գործընկերներին եւ ընկերներին,- ընդգծեց վարչապետը՝ հավելելով, որ ակնկալիքները դրական են, այստեղ խնդրահարույց հարցեր չկան:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տան, ԱՄՆ աջակցությունը վերահաստատող քայլ է:

Վարչապետը վերահաստատեց պատվիրակության անդամների պատրաստակամությունը սերտ համագործակցության, գործընկերային հարաբերությունների հետագա ամրապնդման նպատակով՝ ինչպես պաշտպանության, այնպես էլ առեւտրատնտեսական եւ ներդրումային ոլորտներում: Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանը եղել եւ մնում է ԱՄՆ-ի ուժեղ եւ հուսալի գործընկերը տարածաշրջանում եւ նրա սահմաններից դուրս:

Հանդիպմանը, ԱՄՆ Սենատի պատվիրակության անդամները վարչապետի հետ զրույցում, վերահաստատեցին ԱՄՆ Կոնգրեսի անսասան աջակցությունը Վրաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԸ ՀԱՍՏԱՏԵՑ «ՎՐԱՍՏԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ»

Ապրիլի 28-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հաստատեց «Վրաստանի աջակցության ակտը», որը երկու երկրների միջեւ հաստատում է ամուր ռազմավարական գործընկերություն օրենսդրական մակարդակով:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը, 2021 թվականի փետրվարի 8-ին, Ներկայացուցիչների պալատում օրինագիծը կրկին ներկայացրել են Վրաստանի բարեկամների խմբի համանախագահներ, կոնգրեսականներ Ջերի Քոնոլին (դեմոկրատ) եւ Ադամ Քինզինգերը (հանրապետական): Օրինագիծը ներկայումս ունի ընդհանուր առմամբ 19 համահեղինակ՝ ինչպես Դեմոկրատական, այնպես էլ՝ Հանրապետական կուսակցություններից:

Ըստ Վրաստանի ԱԳ նախարարության՝ «Վրաստանին աջակցող ակտն» ընդգծում է Միացյալ Նահանգների ամուր աջակցությունը Վրաստանին՝ որպես ՆԱՏՕ-ի հավակնորդ երկրի, ինչպես նաեւ Վրաստանի քաղաքացիների՝ երկրի ապագան, արտաքին ու անվտանգության քաղաքականությունը որոշելու իրավունքը, առանց այլ երկրների միջամտության կամ պարտադրանքի:

ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի կողմից արդեն հաստատված օրենսդրական ակտի օրինագիծը կուղարկվի Սենատ: Եթե օրինագիծը հաստատվի Սենատի համապատասխան հանձնաժողովների եւ Սենատի լիագումար նիստի կողմից, այն կուղարկվի Միացյալ Նահանգների նախագահին, իսկ ստորագրման դեպքում՝ Վրաստանին սատարող ակտը ուժի մեջ կմտնի:

ՖՐԱՆՍԻԱ
ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Ապրիլի 24-ին, Ֆրանսիայում անցկացված նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, Էմանուել Մակրոնին աջակցել է ընտրելու իրավունք ունեցողների 58,5 տոկոսը: Մարին Լե Պենն ունի ձայների 41,4 տոկոս:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը ստացել է ավելի քան 18 միլիոն ձայն, իսկ Մարին Լե Պենը՝ ավելի քան 13 միլիոն ձայն:

Մասնակցությունը կազմել է 65 տոկոս:

Էմանուել Մակրոնը Ֆրանսիան կգլխավորի առաջիկա հինգ տարիներին:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱՎԹԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Եվրամիությունում ռուսական նավթի ամբողջական էմբարգոյի վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել: Այդ մասին հայտնեց Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով հանձնակատար Ջոզեֆ Բորելը:

Նրա խոսքով՝ այդ հարցը կքննարկվի Եվրամիության առաջնորդների հաջորդ գագաթաժողովում, որը նախատեսված է մայիսի վերջին, իսկ մինչ այդ որոշում չի ընդունվի ռուսական նավթի կամ գազի էմբարգոյի վերաբերյալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կարգադրությամբ, ոչ բարեկամական երկրներին բնական գազի վաճառքը իրականացվելու է ռուսական ռուբլիներով: Առանձին երկրներ, մասնավորապես՝ Հունգարիան, համաձայնվել է այդ պայմանին, իսկ Լեհաստանը, Բուլղարիան, Մերձբալթյան երկրները կտրականապես մերժել են պայմանը: Արդյունքում, ապրիլի 27-ի առավոտյան «Գազպրոմ»-ը լիովին դադարեցրել է գազի մատակարարումները «Բուլգարգազ» (Բուլղարիա) եւ PGNiG (Լեհաստան) ընկերություններին:

ՄՈԼՈՐԱԿ
ՆՎԱԶԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Համաշխարհային բանկը 2022 թվականի համաշխարհային տնտեսական աճը՝ 4,1 տոկոսից իջեցրել է մինչեւ 3,2 տոկոս:

Տնտեսական ակտիվության դանդաղեցման գործոններից են անվանվել Ուկրաինայի իրադարձությունները, Չինաստանում կորոնավիրուսային արգելափակումները, էներգակիրների, պարարտանյութի, սննդամթերքի գների բարձրացումը, տոկոսադրույքների բարձրացման մեծ հավանականությունը:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին առաջարկել է՝ երկրում ռազմական դրությունը երկարաձգել եւս 30 օրով: Օրինագիծը ապրիլի 19-ին գրանցվել է Գերագույն ռադայում:

Զելենսկին առաջարկում է «Ուկրաինայում ռազմական դրության ժամկետը երկարացնել 30 օրով՝ 2022 թվականի ապրիլի 25-ից»:

ՌՈՒՍՆԵՐԸ ՌՄԲԱԿՈՇՈՒՄ ԵՆ «ԱԶՈՎՍՏԱԼԻ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ

Ուկրաինական կողմի հաղորդագրության համաձայն՝ ռուսները շաունակում են Մարիուպոլի «Ազովստալ» գործարանի տարածքում գտնվող հիվանդանոցի ռմբակոծությունը, կան զոհեր եւ վիրավորներ:

Ըստ տեղեկությունների՝ Մարիուպոլի «Ազովստալ» գործարանի տարածքում զոհվել է մինչեւ 1000 խաղաղ բնակիչ եւ ուկրաինացի զինվոր, 500-ը վիրավորվել են:

ՍԱԴՐԱՆՔԻՆ ԿՀԵՏԵՎԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ինչպես հայտարարեց Ռուսաստանի ԱԳ նախարարության մամուլի խոսնակ Մարիա Զախարովան՝ սադրանքին, որը դրդում է Ուկրաինային հարվածել ռուսական օբյեկտներին, կհետեւի Ռուսաստանի կոշտ պատասխանը:

Զախարովայի խոսքով, արեւմտյան խորհրդականները, որոնք մնում են Ուկրաինայի որոշումների կայացման կենտրոններում, խնդիր չեն լինի Ռուսաստանի պատասխան քայլերի համար:

«Կուզենայի, որ Կիեւը եւ արեւմտյան մայրաքաղաքները լրջորեն վերաբերվեին մեր երկրի պաշտպանության նախարարության հայտարարություններին, որ Ուկրաինայի հետագա սադրանքը՝ ռուսական թիրախներին հարվածելու առումով, անխուսափելիորեն կհանգեցնի Ռուսաստանի կոշտ պատասխանին: Մենք խորհուրդ չենք տալիս փորձարկել մեր համբերությունը: Ռուսաստանը հաստատակամ է հատուկ գործողության նպատակներին հասնելու հարցում»,- ասաց Ռուսաստանի ԱԳ նախարարության մամուլի խոսնակը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստի մեկնարկին վարչապետը հանդես եկավ նոր դպրոցների շինարարության ծրագիր սկսելու նախաձեռնությամբ, որն զգալիորեն կարագացնի եւ կբարելավի իրավիճակը մեծ ծավալով: Ըստ վարչապետի՝ ծրագրում կարեւորվել են ինչպես նախադպրոցական, այնպես էլ՝ դպրոցական ենթակառուցվածքների հետ կապված կարեւոր ոլորտները:

- Վերջին 8-9 տարիներին կառուցվել է 175, վերանորոգվել՝ ավելի քան 220 դպրոց, բայց դա բավարար չէ: Մենք վերանորոգելու ենք 800 դպրոց, այդ թվում՝ 80-ը կառուցելու ենք հիմքից, մենք պետք է իրականացնենք 220 դպրոցների լիարժեք վերականգնում,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ բյուջեն կկազմի մոտ մեկ միլիարդ լարի:

Անդրադառնալով մանկապարտեզների հարցին՝ վարչապետը նշեց, որ մանկապարտեզների վիճակը երկրում կրիտիկական է:

- Շատ մանկապարտեզներում ծանր իրավիճակ է, հատկապես՝ մարզերում: Հետեւաբար, մենք որոշում կկայացնենք, որ 90 մանկապարտեզ վերանորոգվի մարզերում, իսկ ողջ երկրում՝ 412,- ասաց վարչապետը:

ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդես եկավ անապահով ընտանիքների աշխատունակ անդամներին, ընտանիքին տրվող պետական նպաստի պահպանման պայմաններում աշխատանքով ապահովելու նախաձեռնությամբ: Ծրագիրը մեկնարկեց մարտի 1-ին:

Վրաստանի առողջապահության նախարարության՝ զբաղվածության խթանման պետական գործակալության տվյալներով, մարտի 1-ից ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում, արդեն աշխատանքի է տեղավորվել 4 601 անապահով քաղաքացի:

Տեղեկության համաձայն, քաղաքացիները հիմնականում աշխատում են բյուջետային կազմակերպություններում՝ դպրոցներում, թատրոններում եւ այլն:

Հատկանշական է, որ, ըստ տարածաշրջանների, ամենաբարձր զբաղվածությունը՝ 1 160 սոցիալապես անապահով աշխատող, գտնվում է Գուրիայում, ամենացածրը՝ 39 սոցիալապես անապահով աշխատող, Թբիլիսիում: Սամցխե Ջավախեթիում, վերոնշյալ ծրագրի շրջանակներում, աշխատանքով ապահովվել է 311, իսկ Քվեմո Քարթլիում՝ 220 սոցիալապես անապահով աշխատող:

Հանրային աշխատանքների զբաղվածության խթանման ենթածրագրի հարթակում, այս փուլում, գրանցված է շուրջ 22 հազար թափուր աշխատատեղ: Մինչեւ տարեվերջ, հայտարարված թափուր աշխատատեղերի թիվը կհասցվի 50 հազարի:

Հանրային աշխատանքներում զբաղվածության խթանման ենթածրագրի պետբյուջեից, նախնական փուլում, հատկացվել է 4 մլն 931 հազար 250 լարի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ 1-Ի՞Ց ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՍԱԿԱԳԻՆՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

Վրաստանում, մայիսի 1-ից, անձնագրերի եւ ինքնությունը հաստատող քարտերի գինը թանկացվում է:

Նախկինում սահմանված 100 լարիի դիմաց, անձնագիր ստանալու համար, այսուհետ, Վրաստանում քաղաքացին կվճարի 150 լարի՝ 10 աշխատանքային օրում ստանալու համար: 5 աշխատանքային օրում ստանալու համար, նախկինում 120 լարիի փոխարեն, անհրաժեշտ է վճարել 180 լարի, 3 աշխատանքային օրում ստանալու համար, 150 լարիի փոխարեն, պետք է վճարել 230 լարի: Նույն օրը ստանալու համար, 200 լարիի փոխարեն, պետք է վճարել 350 լարի (մոտ 115 դոլար):

Ինքնությունը հաստատող (ID) քարտի համար, նախկինում սահմանված 34 լարիի փոխարեն մայիսի 1-ից հարկավոր է վճարել 60 լարի՝ 10 աշխատանքային օրում ստանալու համար: 5 աշխատանքային օրում ստանալու համար, 40 լարիի փոխարեն, պետք է վճարել 84 լարի, 3 աշխատանքային օրը ստանալու համար, 50 լարիի փոխարեն, պետք է վճարել 104 լարի:

Նույն օրը ստանալու համար, 65 լարիի (մոտ 21 դոլար) փոխարեն, պետք է վճարել 154 լարի (մոտ 51 դոլար):

ՀԱՑԻ ԳԻՆՆ ԱՎԵԼԱՑՎԵՑ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ, ՔԱՆ ՍՊԱՍՎՈՒՄ ԷՐ

Վերջին երկու շաբաթվա ընթացքում, առանձնապես Զատկի տոներին, Վրաստանում վավերացվեց հացի գնի ավելացում: Գործարանային հացի արժեքն ավելացավ 10 թեթրիով, թեպետ, փորձագետների հաշվարկումներով, հացի գնի ավելացումը սպասելի էր մայիսից: Վերոնշյալ փաստը հաստատում են հացամթերքների արտադրության ընկերությունները, նշելով, որ եթե ներկրվող ալյուրի գինն ավելանա, ապա դա կհանգեցնի հացի է՛լ ավելի թանկացմանը: Ոլորտի ներկայացուցիչների հավաստմամբ՝ իրավիճակի կարգավորման համար անհրաժեշտ է իշխանության ակտիվ միջամտությունը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՎՃԱՐԵԼ ԴՈԼԱՐՈՎ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել էր կարգադրություն, ըստ որի՝ ոչ բարեկամ երկրների բնական գազի վաճառքը իրականացվելու է ռուսական ռուբլիներով: Այդ երկրների ցուցակում Վրաստանը չէր ընդգրկվել:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը, Վրաստանը շարունակում է ռուսական գազը գնել դոլարով:

Նշենք, որ Վրաստանը բնական գազի պահանջարկը հիմնականում բավարարում է ներկրված գազի հաշվին: Երկրի համար անհրաժեշտ ծավալը ստացվում է Ադրբեջանից եւ մի փոքր մասը՝ Ռուսաստանից: Նշենք, որ Վրաստանով է անցնում Ռուսաստանից Հայաստան անցնող գազատարը: Մինչեւ 2017 թվականը, որպես տարանցիկ երկիր, Վրաստանն այդ գազատարից ստանում էր փոխանցած գազի 10 տոկոսը: 2017 թվականից տարանցման համար Ռուսաստանը սկսեց վճարել մասնակիորեն գազով եւ կոնկրետ գումար, իսկ 2018 թվականից՝ միայն փողով:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՀՈՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 26-ին, Սամցխե-Ջավախեթիի պետական լիազոր, նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, փոխնահանգապետ Շալվա Բերձենիշվիլին, երկրամասի մունիցիպալիտետների քաղաքապետերի եւ սակրեբուլոների նախագահների հետ միասին, հողի համակարգային գրանցման բարեփոխման շրջանակներում, տեղեկատվական հանդիպում անցկացրին հանրային ռեեստրի նախագահ Օլեգ Թորքլաձեի հետ:

Հիշեցնենք, որ հանրային ռեեստրի ազգային գործակալությունը, 2022-2024 թվականներին Վրաստանի 59 մունիցիպալտետներում (բացառությամբ՝ բռնազավթված տարածքների եւ ինքնակառավարման քաղաքների) իրականացնում է մասնավոր, պետական մունիցիպալային սեփականության ներքո գտնվող հողատարածքների գրանցումը: Ներկա դրությամբ, գործընթացն անց է կացվում երկրի ավելի քան հազար վարչական միավորներում: Բարեփոխման արդյունքում կգրանցվի Վրաստանում հողատարածքների շուրջ մեկ երրորդ մասը:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻՆ

Վրաստանում Ճապոնիայի դեսպանատան՝ մարդու անվտանգության ապահովման ծրագրի (GGP) շրջանակներում, Ախալքալաքի քաղաքին կտրվի 56 000 դոլար արժողությամբ աղբահանող մեքենա:

Մեքենան ապահովելու է մունիցիպալիտետի 9 գյուղերի թափոնների ժամանակին հեռացումը՝ շրջակա միջավայրին ու մարդկանց առողջությանը չվնասելու համար:

Ապրիլի 28-ին, Ախալքալաքիում անցկացվեց մեքենայի փոխանցման արարողություն, որին, Ճապոնիայի դեսպանության աշխատակիցների հետ միասին, մասնակցեցին Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը:

ԷԴԳԱՐ ՄԱԶՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՈՍԻՊՈՎԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելի (նախկին՝ Միրզոեւկա) գյուղի հանրային դպրոցում նորից տոն էր: 2019-2020 ուստարվա լավագույն շրջանավարտներ Էդգար Մազմանյանը եւ Ալեքսանդր Իոսիպովը պարգեւատրվում էին ոսկե մեդալներով եւ պատվոգրերով: Համավարակով պայմանավորված արարողությունը մի փոքր ուշացած էր, բայց եւ չէր կարող անշուք անցնել, քանի որ յուրաքանչյուր երիտասարդ ոչ միայն իր ընտանիքի, այլեւ դպրոցի հպարտությունն է, ում հաջողության մասին անպայման խոսել է պետք: Ուստի Էդգարի եւ Ալեքսանդրի մասին խոսել, թեկուզ ավարտելուց երկու տարի անց, բնավ ուշ չէր: Շնորհաշատ, այժմ արդեն Վրաստանի տարբեր համալսարաններում ուսանող երիտասարդները, երկու տարի առաջ բարձր միավորներով հանձնել էին ազգային քննությունները եւ լիարժեք ֆինանսավորմամբ անվճար ընդունվել վրացական բուհեր:

«Վրաստան» թերթը շնորհավորում է Ալեքսանդրին եւ Էդգարին, ով, ի դեպ, Մառնեուլիի մասին նյութերով եւ հատկապես համավարակի թեժ օրերին, հանդես է եկել մեր թերթի էջերում:

Մեր խմբագրության հետ կապվեցին Էդգար Մազմանյանի ծնողները, ովքեր «Վրաստան» թերթի միջոցով եւս խնդրեցին փոխանցել իրենց շնորհակալությունն ու երախտագիտությունը Ծերեթելի գյուղի դպրոցի հայկական բաժնի ղեկավար Վանիկ Արոսյանին, ինչպես նաեւ ուսուցչական ողջ կազմին՝ քրտնաջան աշխատանքի համար, ցանկանալով ուժ ու եռանդ շնորհալի սաներ կրթելու եւ դաստիարակելու պատասխանատու գործում:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 107

ՋՈ ԲԱՅԴԵՆ. «ՄԵՆՔ ՀԱՆԱՋՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԵՐԻ ՅԱՎԱՆ ՈՒ ՀԱՐԳՈՒՄ ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ին« օսմանյան իշխանությունները Կոստանդնուպոլսում ձերբակալեցին հայ մտավորականներին ու համայնքի առաջնորդներին: Այդպիսով սկսվեց Հայոց Ցեղասպանությունը՝ 20-րդ դարի վատագույն զանգվածային կոտորածներից մեկը: Այսօր մենք հիշում ենք մեկուկես միլիոն հայերին, ովքեր տեղահանվեցին, սպանվեցին կամ մահվան երթի դուրս եկան ոչնչացման արշավի ընթացքում եւ սգում ենք այդքան շատ կյանքերի ողբերգական կորուստը:

Խոսելով Հայոց Ցեղասպանության մասին՝ մենք վերահաստատում ենք մեր խոստումը՝ զգոն լինել ընդդեմ ատելության կործանարար ազդեցության՝ իր բոլոր դրսեւորումներում: Մենք վերստին պարտավորվում ենք խոսել եւ դադարեցնել կոտորածները, որոնք աշխարհի վրա մնայուն սպիներ են թողնում: Միաժամանակ, սգալով այն ամենի համար, ինչ կորցրեցինք Մեծ Եղեռնի ընթացքում, մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ ապաքինելու եւ կառուցելու ավելի լավ, ավելի խաղաղ աշխարհ, որը ցանկանում ենք մեր երեխաներին: Աշխարհ, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, որտեղ մոլեռանդության եւ անհանդուրժողականության չարիքներով չի նշանավորվում մեր ամենօրյա կյանքը, եւ որտեղ մարդիկ ամենուր ազատ են իրենց կյանքն ապրելու արժանապատիվ ու անվտանգ:

Սա նաեւ պահն է՝ խոսելու հայ ժողովրդի ուժի եւ տոկունության մասին: Ցեղասպանությանը դիմանալուց հետո՝ հայ ժողովուրդը վճռական էր՝ կառուցելու իր համայնքն ու մշակույթը, շատ հաճախ արդեն նոր տանն ու երկրում, այդ թվում եւ՝ Միացյալ Նահանգներում: Ամերիկայի հայերը Միացյալ Նահանգների կենսական մասն են: Նրանք մեր երկիրն ավելի ուժեղ ու ավելի դինամիկ են դարձնում՝ անգամ շարունակելով իրենց հետ կրել ողբերգական հիշողությունն այն մասին, թե ինչ էին ստիպված վերապրել իրենց նախնիները: Մենք ճանաչում ենք նրանց ցավն ու հարգում նրանց պատմությունը:

Այսօր՝ 107 տարի անց, ԱՄՆ-ի ժողովուրդը շարունակում է հարգել բոլոր հայերին, ովքեր զոհվեցին ցեղասպանության ժամանակ»:

Ռ.Թ.ԷՐԴՈՂԱՆ. «...ՄԻԱՍԻՆ ԲՈՒԺԵԼ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐՔԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մնացած բարեկամներին»:

Էրդողանը կոչ է արել «անցյալի վերքերը միասին բուժել եւ մարդկային կապերն էլ ավելի ամրապնդել» ու «միասին կառուցել ապագան»:

«Մեր հարեւան Հայաստանի հետ այս նպատակով դրական գործընթաց ենք սկսել: Գիտեմ եւ շատ կարեւորում եմ այն հանգամանքը, որ կարգավորման գործընթացին անկեղծորեն աջակցում են նաեւ մեր հայկական ծագումով քաղաքացիները, որոնք կողմ են 2 հարեւան երկրների միջեւ սերտ համագործակցությանը»,- հայտարարել է Էրդողանը՝ ակնկալելով, որ Թուրքիայի հայ համայնքը եւս մասնակցություն կունենա տվյալ գործընթացին:

Էրդողանը 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց Եղեռնը նորից ներկայացրել է՝ որպես Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած ցավալի իրողություն:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔ-ԵՐԹ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 24-ին, Թբիլիսիի քաղաքապետարանի թույլտվությամբ, մայրաքաղաքում «Մի' աջակցեք Ցեղասպանությանը» երթի մասնակիցները ֆիլհարմոնիայից շարժվեցին դեպի Վրաստանում Թուրքիայի դեսպանատուն: Ընթացքում հնչող ելույթները կոչ էին՝ դատապարտելու Հայոց Ցեղասպանության մեղսագործներին:

Ցույցի ավարտին կազմակերպիչները շնորհակալություն հայտնեցին Վրաստանի ներքին գործերի նախարարությանը՝ երթի եւ ցույցի անվտանգությունն ապահովելու համար:

Հայոց Ցեղասպանության 107-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ անցկացվեցին նաեւ Բաթումիում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցիխեում, Ծալկայում:

ՇԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՋՈՀԵՐԻՆ ՆՎԻՎԱԾ ԽԱՉՔԱՐԻՆ

Ապրիլի 24-ին Ախալքալաքիի Սուրբ Խաչ եկեղեցու բակում տեղադրված Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարի մոտ ծաղիկներ խոնարհվեցին:

Եկեղեցում Հայոց Ցեղասպանության Սուրբ Նահատակների հիշատակին մատուցվեց պատարագ:

Ի հիշատակ անմեղ զոհերի՝ ծաղիկներ խոնարհեցին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, կրթական հաստատությունների ու հասարակական կազմակերպությունների աշխատակիցներ, քաղաքացիներ:

ՀԱՐՑՈՒՄ

NDI. ՉՆԱՅԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆԸ

Ամերիկյան Ազգային ժողովրդավարական Ինստիտուտի եւ Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ-Վրաստանի կողմից իրականացվել է ուսումնասիրություն: Ձեկույցը հիմնված է երկրի տարածքում (առանց գրավյալ տարածքների) անցկացված երկու հեռախոսային հարցումների վրա՝ Ուկրաինա Ռուսաստանի ներխուժումից մոտ երկու շաբաթ առաջ (փետրվարի 3-15) եւ երկու շաբաթ անց (մարտի 9-20): Փետրվարյան հետազոտության միջին սխալի սահմանը +/- 1,8 տոկոս է, մինչդեռ մարտ ամսվա հարցումը՝ +/- 1,6 տոկոս: Հարցվողներն ընտրվել են պարզ պատահականության սկզբունքով:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՐՑՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԵՆ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) անցկացրած հարցման համաձայն՝ հարցվածների մեծամասնությունը դրական է գնահատում Վրաստանի նախագահի եւ վարչապետի արձագանքը ուկրաինական պատերազմին:

Հարցվածների 63 տոկոսը դրական է գնահատում Վրաստանի նախագահի արձագանքն ուկրաինական պատերազմին, 18 տոկոսը՝ բացասական, 18 տոկոսը հարցին պատասխան չունի:

Ընդ որում, հարցվածների 46 տոկոսը կարծում է, որ Վրաստանի վարչապետի արձագանքն ուկրաինական պատերազմին դրական է, 37 տոկոսը՝ բացասական, իսկ 15 տոկոսը չգիտի հարցի պատասխանը:

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿՎԱՏԹԱՐԱՑՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Վրաստանում հարցվածների 81 տոկոսը գտնում է, որ իրենց ընտանիքների տնտեսական վիճակը կվատթարանա ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով:

Ըստ NDI հարցվածների՝ միայն 1 տոկոսն է կարծում, որ պատերազմի պատճառով իրենց ընտանիքի տնտեսական վիճակը կբարելավվի, իսկ 11 տոկոսը կարծում է, որ պատերազմն ազդեցություն չի ունենա իրենց վրա:

Հարցումը ցույց է տալիս, որ հարցվածների 80 տոկոսն ակնկալում է, որ, հաջորդ 1 տարվա ընթացքում, տնտեսական իրավիճակը կվատթարանա, իսկ 11 տոկոսը կարծում է, որ դա քիչ հավանական է:

Հատկանշական է, որ հարցվածների մեծամասն ակնկալում է Վրաստանում ռուսամետ ուժերի ակտիվացում եւ Վրաստանի դեմ ռուսական ռազմական ագրեսիա:

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի եւ CRRC-Վրաստանի կողմից հրապարակված ուսումնասիրության համաձայն՝ Ուկրաինա ռուսական ներխուժումից հետո, Վրաստանի բնակչությունը համոզվել է, որ երկիրը Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ սերտ կապերից ավելի շատ կշահի, քան՝ Ռուսաստանի:

Հաջորդ տարվա ընթացքում՝ Վրաստանի բնակչության մեծ մասն ակնկալում է տնտեսական իրավիճակի վատթարացում (80 տոկոս), ռուսամետ ուժերի ուժեղացում (57 տոկոս) եւ ռուսական ռազմական ագրեսիա (52 տոկոս): Նման ակնկալիքների ֆոնին՝ քաղաքացիների մեծամասնությունը շարունակում է վճռականորեն աջակցել՝ Եվրամիությանը Վրաստանի անդամակցությանը եւ Եվրամիությունը անվանել որպես ամենացանկալի տնտեսական եւ քաղաքական գործընկեր: Ընդհանուր առմամբ, 82 տոկոսը կողմ է Եվրամիությանն անդամակցությանը՝ պատճառաբանելով տնտեսական օգուտները եւ ավելի մեծ անվտանգությունը:

Հարցման մասնակիցները գտնում են, որ Ուկրաինայի պատերազմը Ռուսաստանի (67 տոկոս) եւ Պուտինի (11 տոկոս) մեղքն է: Ընդ որում, բնակչության ճնշող մեծամասնությունը դրական է վերաբերվում ինչպես ուկրաինացի ժողովրդին (98 տոկոս), այնպես էլ՝ Ուկրաինայի կառավարությանը (87 տոկոս):

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՐԿԻՆ ՕԳՏՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Ամերիկյան ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցմանը զուգընթաց, հերթական ուսումնասիրությունն անցկացրեց նաեւ միազգային հանրապետական ինստիտուտը (IRI): Հարցումն իրականացվել է 2022 թվականի մարտի 4-24-ը՝ դեմառդեմ սկզբունքով: Հարցմանը մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող 1 486 քաղաքացի: Սխալների սահմանը +/- 2,5 տոկոս է:

ԵԹԵ ՀԻՄԱ ԱՆՑԿԱՑՎԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) նոր ուսումնասիրության համաձայն՝ հարցին, թե ո՞ր կուսակցության օգտին կքվեարկեին, եթե հաջորդ շաբաթ անցկացվեին խորհրդարանական ընտրություններ՝ հարցվածների 31 տոկոսը պատասխանել է՝ իշխող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան»-ի օգտին: 16 տոկոսը գերադասում է «Միացյալ ազգային շարժումը», 4 տոկոսը՝ «Վրաստանի համար» (Գիորգի Գախարիայի կուսակցությունը), երկուական տոկոս բաժին ընկավ՝ «Դրոա» (Էլենե Խոշտարիա), «Ռազմավարություն՝ Աղմաշենեբելի» (Գիորգի Վաշաձե), «Լեյբորիստական կուսակցությանը», «Ժողովրդի համար» (Անա Դոլիձե), «Լելո»:

ԱՄԵՆԱՀՈՒՍԱԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՆ Է

Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից անցկացված հարցման համաձայն՝ 54 տոկոսի համոզմամբ, Վրաստանի ամենանշանակալից քաղաքական գործընկերը Եվրամիությունն է: 53 տոկոսը գտնում է, որ ամենահուսալին ԱՄՆ-ն է: 45 տոկոսի կարծիքով՝ Ուկրաինան, 20 տոկոսի համոզմամբ՝ Թուրքիան է եւ Ադրբեջանը: 7 տոկոսը գերադասություն է Հայաստանին, 4 տոկոսը՝ Չինաստանին եւ Ռուսաստանին:

ԱՄԵՆԱՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔՆ Է

IRI-ի կողմից անցկացված հարցման համաձայն՝ հարցման ենթարկվածների 92 տոկոսը բարձր է գնահատում Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի գործունեությունը, 53 տոկոսի համար լավագույն գործիչը Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն է, իսկ 52 տոկոսի համար՝ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին: Այս ցուցակում չորրորդը՝ 47 տոկոսով, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին է:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 59 տոկոսը դրական է գնահատում Ռուսաստանի հետ ներկայիս կառավարության հարաբերությունները, 26 տոկոսը՝ բացասական: Հարցման արդյունքներով՝ մեծամասնությունը, 74 տոկոսով լրիվությամբ կողմնակից է Ռուսաստանի հետ երկխոսությանը, 15 տոկոսը՝ մասնակիորեն, իսկ 5 տոկոսը դեմ է դրան:

Միաժամանակ, հարցվածների 83 տոկոսի կարծիքով՝ տնտեսական ամենամեծ վտանգը սպասելի է Ռուսաստանից, 5 տոկոսը՝ Թուրքիայից, 4-ը՝ ԱՄՆ-ից, իսկ 2-ը՝ Չինաստանից:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ